

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Լուսայի» անցեալ համարում լայանել էինք, որ լոյս տեսաւ դադարած հայկական «Նոր-Դար» լրագրի առաջին համարը և մի օրում սպառուեցաւ հինգ հազար օրինակ, այդ արդէն ապացոյց էր, թէ որ աստիճան ընթերցող հասարակութիւնը զգում էր մի օրինաւոր թերթի պահանջ, որ յագեցնել անկարող էր վերջին տարիների մամուլը: Այժմ «Նոր-Դարը» սկսել է լոյս տեսնել կանոնաւոր կերպով և ընդարձակուած— մայրաքաղաքների մեծ թերթերի չափսով: «Նոր-Դարի» հետ միաժամանակ սկսաւ կանոնաւոր կերպով լոյս տեսնել և պ. Գ. Մելիք-Ղարազեօզեանի «Արշալոյս» ամենօրեայ թերթը նոյնպէս մեծ ծաւալով և հետաքրքրական բովանդակութեամբ: Մենք ողջունում ենք այդ երկու թերթերի հրապարակ գալը, ցանկալով կատարեալ յաջողութիւն:

Երկար ժամանակ մի խումբ մարդիկ իրանց օրգան թերթով աշխարհ էին թնդացնում ընտրական սկզբունքների և հասարակաց շահերի պաշտպանութեան խնդրով. ընտրական սկզբունքը խախտուեցաւ, ժողովրդի իրաւունքները ոտնատակ եղան, պէտք է ընտրական սկզբունքը գործադրել լայն ծաւալով ևն ևն, աղաղակում էին նոքա, երբ ձեռնտու էր իրանց, երբ այդ բանից չէր տուժում կուսակցական շահերը: O tempora, o mores, ժամանակները փոխուել են. քամին ուրիշ տեղից է փչում. այժմ ամեն մի խմբակ իրան իրաւունք է համարում հասարակաց անունից խօսել, ժողովրդի անունից դատել և... կարգադրութիւններ անել, ներկայացնելով մի մի ինքնակոչ յանձնաժողով կամ մասնաժողով, յանձնախումբ կամ մասնախումբ: Ականջդ կանչի Պարոնեան: Յիշեցէք վերջին եօթնամիսների ընթացքում կազմուած մասնաժողովների գոյութեան պատմութիւնը: Այդ տեսակ յանձնաժողովներից մէկի— դպրոցական յանձնաժողովի մասին խօսելով վերանորոգուած «Նոր-Դարը» իւր 3 համարում, մի իմաստալից և նշանակալից յօդուածում ասում է.

«Ով է առաջադրել Եւրոպայի հոգևոր իշխանութեան այդ յանձնա ժողի անուանացուցակը, և ինչից դրդուած յայտնի չէ, մեզ թուում է, որ այդ անողը լուծառայութիւն չէ մատուցանում հայոց դպրոցներին:

Ճշմարիտ է, յանձնաժողովի նախագահն համալսարանական է, երկար տարիներ վարել է ներսիսեան հոգևոր դպրանոցի և Ս. Էջմիածնի ճեմարանի տնօրէնութեան պաշտօնը, հետեւապէս քաջ ծանօթ է դպրոցական գործին և ունի ահագին փորձառութիւն, հետեւաբար իւր տեղումն է, բայց Գեորգ Նահապետ եպիսկոպոսից դէնը—միւս անդամները գրեթէ ամբողջութիւնը կազմուած է փաստարաններից, բժիշկներից և այլ տեսակ մարդկանցից, որոնք դպրոցական գործից հեռու են եղել և ուսուցիչ չեն ու մանկավարժ չեն:

Պատուական Համբարձում Առաքելեանի և Ալէքսանդր Քալանթարի անդամակցութիւնը մեզ չի դարձացնում, եթէ նրանք չըլինէին, այդ կարող էր մեզ դարձացնել. հայոց սղոտը երկիրքը մեր ներկայ ու դալիքը նեղութիւններն ի նկատի առնելով, շնորհել է մեզ նրանց: Նրանք այդ երկիրի ընտրելիներն են. դրանք ամեն տեղ և ամեն բանի ներկայացուցիչն են:

Դպրոցական յանձնաժողով .բայց ճբտեղ են աշխարհականներից Ս. Մանդի-նեան, Մ. Կոստանեան, Փ. Վարդանեան, Ղ. Աղայեան, բժ. Գարբիէլ Յովհաննիսեան, Չարսեան, Ս. Չահնազարեան և այլն, և այլն, որոնց անունները այս բողոքէն չենք մտաբերում, իսկ հոգևորականներից՝ Յ. Աուկանեան, Գարագառ վարդապետ, Գ. Յովսէփեան, Բենիկ և այլն գործիչներ, որոնք իբրև տեսակներ, իբրև ուսուցիչ մանկավարժներ իբրևնց կեանքը տասնեակ տարիներ մաշել են դպրոցներում և քաջ ծանօթ են մեր դպրոցների անցեալին և կարելի ենք ինքնին:

Եթէ յանձնաժողովի կարելի լինի, ամենքը մեզ հետ պիտի համաձայնուին, որ դրա անդամները վերայիշեալ կարգի գործիչներից պէտք է կազմուին: Ուրիշ տեսակ յանձնաժողովը կուսակցական, անձնական բան է և կլինի, և անշուշտ բացի կռիւնքը ուրիշ էլ ոչ մի բան չի կարող առաջացնել:

Միթէ մենք չըպէտք է անցեալից խրատունք. թնչու են ուզում ամեն մի բան զանգից կախել, ինչու ենք աղմուկ բարձրացնում, վէճերի, կռիւների, տարազուսանքների դուռը բաց անում: Լռեցէք մեզ. իդուր էք կարծում, ամեն բան ապահոված, վերջացրած է:

Մեր հաստատութիւններն իբրևնց դոյութեան այնպիսի շրջանն են մտել, որ այսուհետև մի սխալ բայր կորստաբեր է լինելու, կորուստը անվերադառնալի:

Խնդրում ենք Ս. Էջմիածնից. (որի ձեռքի տակն է մեր բոլոր հաստատութիւններն և պէտք է մնայ միշտ), փողոց չըձգէ մեր դպրոցները, խնդրում ենք մեր հոգևոր իշխանութիւնից խողալիք չը դառնայ անցաւոր մարդկանց, իմբակների ձեռքում: Բուսական համարէ թուլութեամբ մեր կըսած բարոյական և ամեն կերպ հարուստները:

Թող իրչէ Ս. Էջմիածնից, որ այժ և ձախ լսելով և եղեզնի պէս աատանուելով, նա մեր ազգի պարծանք՝ կաթողիկոսութիւնը, հազարաւոր տարիներէ վեհ. ս. Աթուր իջեցրեց մի մահմեդական հասարակ կրօնատրի ստեղծանին»:

Կայլրէի «Լուսաբեր» թերթը մեր ազգի ներկայ ինքնասպանութեան պատճառը գտնում է անհեռատեսների անհաշիւ ձեռնարկների մէջ. նա գտնում է, որ հայ ազգը զանազան լարմ-